«ԳՅՈՒՄՐՈՒ ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏ» ՊՈԱԿ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԵՂՈՐԱՅՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/5-Շ-2-ՏԻ

ք. Երևան «27» ապրիլի 2018 թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Արֆարմացիա» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են __5__ օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

2.5 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 104-րդ կետի պահանջներին համապատասխան Պայմանագրով սահմանված Գնորդի իրավունքների և պարտականությունների իրականացումը վերապահվում է «Գյումրու տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 140825.70 (Մեկ հարյուր քառասուն հազար ութ հարյուր քսանհինգ դրամ յոթանասուն լումա) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի

կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք. Երևան Կառավարական տուն 3 ՀՎՀՀ՝ 01506515 «Կոնվերս բանկ» ՓԲԸ Հ/Հ 1930032323300100	«Արֆարմացիա» ՓԲԸ ք. Երևան, Ռաֆֆու 111 ՀՎՀՀ՝ 02505735 «ՀայԷկոնոմբանկ» ԲԲԸ Հ/Հ 163008100220
Աշխատակազմի ղեկավար .....Ա. Գրիգորյան /ստորագրություն/ Կ.Տ.	Տնօրեն .....Ա. Հովհաննիսյան /ստորագրություն/ Կ.Տ.

Հավելված N 1
«27» ապրիլի 2018թ. Կնքված
N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/5-Շ-2-ՏԻ» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը*
17	33691191	Դեքստրոզ, Գլյուկոզ	<<Երևանի քիմ դեղ ֆիրմա>> Հայաստան	լուծույթ ն/ե ներարկման, 400մգ/մլ; (10) ամպուլներ 5մլ պիտակ բանդերով, (10/2x5/) ամպուլներ 5մլ, բլիստերում	սրվակ	34.30	2058.00	60	ք. Գյումրի, Երևանյան խճուղի 45/1	60	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
23	33691191	Թիամին (թիամինի քլորիդ)	<<Երևանի քիմ դեղ ֆիրմա>> Հայաստան	թիամինի քլորիդ, լուծույթ մ/մ ներարկման, 50մգ/մլ; (10) ամպուլներ 1մլ	սրվակ	18.70	3740.00	200	ք. Գյումրի, Երևանյան խճուղի 45/1	200	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
24	33631310	Իբուպրոֆեն	<<Բորիսով>> Բելոռուս	իբուպրոֆեն, դեղահատեր թաղանթապատ 200մգ; (100/10x10/) բլիստերում	դ/հ	5.05	10100.00	2000	ք. Գյումրի, Երևանյան խճուղի 45/1	2000	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
33	33621370	Ջրածնի պերօքսիդ	<<Վակի Ֆարմ>> Հայաստան	Ջրածնի պերօքսիդի լուծույթ 3% 100մլ	շշիկ	108.00	8640.00	80	ք. Գյումրի, Երևանյան խճուղի 45/1	80	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
45	33662100	Ֆուրազոլիդոն	<<Բորիսով>> Բելոռուս	ֆուրազոլիդոն դեղահատեր 50մգ; (10) ստրիպում	դ/հ	2.10	420.00	200	ք. Գյումրի, Երևանյան խճուղի 45/1	200	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
68	33612400	Դրոտավերինի հիդրոքլորիդ, Նոշ-Արփի	<<Արփիմեդ>> Հայաստան	դրոտավերին (դրոտավերինի հիդրոքլորիդ) դեղահատեր 40մգ; (20/2x10/) բլիստերում	դեղահատ	6.49	7009.20	1080	ք. Գյումրի, Երևանյան խճուղի 45/1	1080	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
70	33613000	Բիսակոդիլ	<<Բորիսով>> Բելոռուս	բիսակոդիլ դեղահատեր աղելույծ թաղանթապատ 5մգ; (40/4x10/) բլիստերում	դեղահատ	5.15	1236.00	240	ք. Գյումրի, Երևանյան խճուղի 45/1	240	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
71	33613000	Կատվախոտի ոգեթուրմ	<<Բորիսով>> Բելոռուս	կատվախոտի ոգեթուրմ 200մգ/մլ; 30մլ ապակե շշիկում	շշիկ	153.00	4590.00	30	ք. Գյումրի, Երևանյան խճուղի 45/1	30	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
77	33621620	Կարվեդիլոլ	<<Գրինդեքս>> Լատվիա	կարվեդիլոլ դեղահատեր 12,5մգ; (40/1x40/), բլիստերում	դեղահատ	30.00	21600.00	720	ք. Գյումրի, Երևանյան խճուղի 45/1	720	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
81	33661230	Ացետիլսալիցիլաթթու, մագնեզիումի հիդրոքսիդ, Կարդիոլայֆ	<<Արփիմեդ>> Հայաստան	ացետիլսալիցիլաթթու, մագնեզիումի հիդրոքսիդ դեղահատեր թաղանթապատ 75մգ+15,2մգ; (96/4x24/) բլիստերում	դեղահատ	10.40	20800.00	2000	ք. Գյումրի, Երևանյան խճուղի 45/1	- 2000	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018

82	33671130	Դիֆենհիդրամին (դիֆենհիդրամին ի հիդրոքլորիդ), Դիմեդրոլ	<<Երևանի քիմ դեղ ֆիրմա>> Հայաստան	դիֆենհիդրամին (դիֆենհիդրամինի հիդրոքլորիդ) լուծույթ ներարկման 10մգ/մլ; (10) ամպուլներ 1մլ, (10) ամպուլներ 1մլ պիտակ բանդերոլ, (10) ամպուլներ 1մլ դիվիդելլա	սրվակ	21.85	1092.50	50	ք. Գյումրի, Երևանյան խճուղի 45/1	50	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
84	33671130	Դիկլոֆենակ նատրիում	<<Բորիսով>> Բելոռուս	դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում) դոնդող արտաքին կիրառման 10մգ/գ; 30գ ալյումինե պարկուճ	պարկուճ	148.00	2960.00	20	ք. Գյումրի, Երևանյան խճուղի 45/1	20	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
92	33651157	Ցեֆտրիաքսոն (ցեֆտրիաքսոն նատրիում)	<<Բորիսով>> Բելոռուս	ցեֆտրիաքսոն (ցեֆտրիաքսոն նատրիում) դեղափոշի ներարկման/կաթիլներարկման լուծույթի 1000մգ; (10) ապակե սրվակ	սրվակ	151.00	22650.00	150	ք. Գյումրի, Երևանյան խճուղի 45/1	150	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
101	33671114	Բրոմհեքսին (բրոմհեքսինի հիդրոքլորիդ)	<<Բորիսով>> Բելոռուս	բրոմհեքսին (բրոմհեքսինի հիդրոքլորիդ) դեղահատեր 8մգ; (50/5x10/) բլիստերում	դեղահատ	2.70	1350.00	500	ք. Գյումրի, Երևանյան խճուղի 45/1	500	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
126	33621300	Կլոտրիմազոլ	<<Արփիմեդ>> Հայաստան	կլոտրիմազոլ նրբաքսուք արտաքին կիրառման 10մգ/գ; 15գ ալյումինե պարկուճ	պարկուճ	187.00	1122.00	6	ք. Գյումրի, Երևանյան խճուղի 45/1	6	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
127	33661128	Կարբամազեպին	<<Արփիմեդ>> Հայաստան	կարբամազեպին դեղահատեր 200մգ; (50/5x10/) բլիստերում	դեղահատ	11.00	22000.00	2000	ք. Գյումրի, Երևանյան խճուղի 45/1	2000	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
129	33693060	Մագնեզիում սուլֆատ	<<Երևանի քիմ դեղ ֆիրմա>> Հայաստան	մագնեզիումի սուլֆատ,լուծույթ ներարկման,250մգ/մլ (5մլ),5մլ ամպուլներ (10)	սրվակ	31.10	1866.00	60	ք. Գյումրի, Երևանյան խճուղի 45/1	60	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
133	33691144	Նատրիումի թիոսուլֆատ	<<Երևանի քիմ դեղ ֆիրմա>> Հայաստան	նատրիումի թիոսուլֆատ լուծույթ ներարկման 300մգ/մլ; (10) ամպուլներ 5մլ	սրվակ	43.60	872.00	20	ք. Գյումրի, Երևանյան խճուղի 45/1	20	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
136	33621620	Տետրացիկլին	<<Արփիմեդ>> Հայաստան	տետրացիկլին ակնաքսուք 10մգ/գ; 3գ ալյումինե պարկուճ	պարկուճ	560.00	6720.00	12	ք. Գյումրի, Երևանյան խճուղի 45/1	12	Ըստ պատվիրատուի պահանջի՝ մինչև 20.12.2018
Ընդամենը							**140825.70**				

** Գնման ժամանակացույցում նշված են առավելագույն քանակները: Քանակները կարող են փոփոխվել շահառուների թվաքանակի փոփոխությամբ պայմանավորված:*

ԳՆՈՐԴ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Աշխատակազմի ղեկավար .....Ա. Գրիգորյան

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Արֆարմացիա» ՓԲԸ

Տնօրեն .....Ա. Հովհաննիսյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 2
«27» ապրիլի 2018թ. Կնքված
N «ԱԱՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/5-Շ-2-ՏԻ» ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավիրով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄՍ դասակարգման (CPV)	անվանումը	դրմամբ վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
17	33691191	Դեքստրոզ, Գլյուկոզ					617.40	823.20	1029.00	1234.80	1440.60	1646.40	1852.20	2058.00	2058.00
23	33691191	Թիամին (թիամինի քլորիդ)					1122.00	1496.00	1870.00	2244.00	2618.00	2992.00	3366.00	3740.00	3740.00
24	33631310	Իբուպրոֆեն					3030.00	4040.00	5050.00	6060.00	7070.00	8080.00	9090.00	10100.00	10100.00
33	33621370	Ջրածնի պերօքսիդ					2592.00	3456.00	4320.00	5184.00	6048.00	6912.00	7776.00	8640.00	8640.00
45	33662100	Ֆուրազոլիդոն					126.00	168.00	210.00	252.00	294.00	336.00	378.00	420.00	420.00
68	33612400	Դրոտավերինի հիդրոքլորիդ, Նոշ-Արփի					2102.76	2803.68	3504.60	4205.52	4906.44	5607.36	6308.28	7009.20	7009.20
70	33613000	Բիսակոդիլ					370.80	494.40	618.00	741.60	865.20	988.80	1112.40	1236.00	1236.00
71	33613000	Կատվախոտի ոգեթուրմ					1377.00	1836.00	2295.00	2754.00	3213.00	3672.00	4131.00	4590.00	4590.00
77	33621620	Կարվեդիլոլ					6480.00	8640.00	10800.00	12960.00	15120.00	17280.00	19440.00	21600.00	21600.00
81	33661230	Ացետիլսալիցիլաթթու, մագնեզիումի հիդրօքսիդ, Կարդիոլայֆ					6240.00	8320.00	10400.00	12480.00	14560.00	16640.00	18720.00	20800.00	20800.00
82	33671130	Դիֆենհիդրամին (դիֆենհիդրամինի հիդրոքլորիդ), Դիմեդրոլ					327.75	437.00	546.25	655.50	764.75	874.00	983.25	1092.50	1092.50
84	33671130	Դիկլոֆենակ նատրիում					888.00	1184.00	1480.00	1776.00	2072.00	2368.00	2664.00	2960.00	2960.00
92	33651157	Տեֆտրիաքսոն (ցեֆտրիաքսոն նատրիում)					6795.00	9060.00	11325.00	13590.00	15855.00	18120.00	20385.00	22650.00	22650.00
101	33671114	Բրոմհեքսին (բրոմհեքսինի հիդրոքլորիդ)					405.00	540.00	675.00	810.00	945.00	1080.00	1215.00	1350.00	1350.00
126	33621300	Կլոտրիմազոլ					187.00	187.00	187.00	374.00	561.00	748.00	1122.00	1122.00	1122.00
127	33661128	Կարբամազեպին					6600.00	8800.00	11000.00	13200.00	15400.00	17600.00	19800.00	22000.00	22000.00
129	33693060	Մագնեզիում սուլֆատ					559.80	746.40	933.00	1119.60	1306.20	1492.80	1679.40	1866.00	1866.00
133	33691144	Նատրիումի թիոսուլֆատ					261.60	348.80	436.00	523.20	610.40	697.60	784.80	872.00	872.00
136	33621620	Տետրացիկլին					2016.00	2688.00	3360.00	4032.00	4704.00	5376.00	6048.00	6720.00	6720.00
Ընդամենը							**42098.11**	**56068.48**	**70038.85**	**84196.22**	**98353.59**	**112510.96**	**126855.33**	**140825.70**	**140825.70**

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:

ԳՆՈՐԴ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Աշխատակազմի ղեկավար ..... Ա. Գրիգորյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՆԱՁԱՏՈՂ
«Արֆարմա» ՓԲԸ

Տնօրեն ..... Ս. Միհանեսյան
/ստորագրություն/
Կ.Տ